

ելեւեջով մի և նոյն շեշտաւորութեամբ մեզ մի բան խօսելու լինէր: Բայց մի՞թէ տաղաչափութեան արուեստը, խօսքի ներգաշնակութիւնը ոտքի տակ տալով միայն կարող ենք խուսափել միօրինակութիւնից: Մենք կարծում ենք որ նոյն իսկ ամենայն ճշգրութեամբ մի և նոյն չափին հետեւելով որ — 3 — 3—5, 1—5—5 * և ընդ թատերական գրուածքներում կարելի է խուսափել միօրինակութիւնից: Ճանձրալի լինելուց, դժբա համար դաս առնելը նոյն ինքն Շէքսպիրից, Եթէ համեմատելու լինինք նորա երիտասարդ հասակում ստեղծուած գործերը իւր արդէն հասունացած հանձարի պտուղների հետ: մենք կը նկատենք մի երևոյթ, որի վրայ գիտնական շէքսպիրարաններն ու շագրութիւն գարծրել են. մինչ առաջին կարգի գրուածքներում մի միտք, մի նախադասութիւն սովորաբար վերջանում է տողի հետ, երկրորդ շրջանի ողբերգութեանց մէջ շատ ու շատ յաճախ տողի կիսումը, տողի մէջ առ հասարակ՝ նախադասութիւնը իւր վախճանն է առնում: Աւերջին հանգամանքը ոտանաւորին զարմանալի կենդանութիւն է տալիս: մտեցնում է խօսակցական լեզուին: գրեթէ անշմարելի է դարձնում նոյն իսկ ոտանաւորի յանգաւոր լինելը: Եթէ յանգաւոր է: Ոտանաւորի այդ յատկութիւնը մի արժանաւորութիւն է բեմական տեսակէտից, և մեզ թուում է որ այս պայմանն էլ բաւական կը լինէր հայերէն տաղաչափութեան միօրինակութիւնը նուազեցնելու:

Այս պայմանն ընդունելուց յետոյ, եթէ համաձայն ենք էլ թէ մի մեծ գրուածքում լեզուն գծութեաններ կարող է յառաջ բերել ճշգրութեամբ հետեւելու մի և նոյն չափին, այն ժամանակ մենք կարծում ենք որ կարելի է ընտրել — պայմանաւոր մի չափ Բագրատունու մեզ տուած օրինակներից, որ վերը յիշեցինք, կամ ք. մեր այժմեան գործածական չափերից մէկն ու մէկը՝ որոշ ազատութեամբ ձեւաւորուած, որ սակայն անսահման պիտի չլինի, կամայականութիւն պիտի չզառնայ: Օրինակի համար, նոյն իսկ պ. Մասէհեանի ընտրած չափը բաւական չէր լինի մի՞թէ երկու կամ երեք ձևի տող ընտրել, տասն և մէկ վանկի ընդհանուր հաշիւը պահպանելով — 3—3—5 և 1—5—5 կամ 3—3—5 և 2—4—5 և այլն. այսպիսի պայմանով գրուած տաղեր ունի, ինչպէս ցոյց տուինք արդէն, ն. Շնորհալին:

Ինչ և իցէ, վերջացնելով մեր խօսքը՝ մենք

* Այս կամ այն չափի ընտրութիւնը համարենք գործադրողի ծաշակի գործ. թող ծաշակի տէր բանաստեղծը ցոյց տայ մեզ թէ որն է անելի ներդաշնակ:

պնդում ենք որ անշուք տալու մեզանում կարող է գոյութիւն ունենալ միմիայն այն պայմանով, որ ամենայն ճշգրութեամբ պահպանուի անշուքի անշուքի և շեշտաւորութեան օրէնքը անգամների վերջաւորութեան նկատմամբ. առանց այս պայմանների գրուածը, այն էլ անյանգ, ոչ մի կերպով չափաբերական համարուելի չէ կարող:

Թ. Թ.



ՀԻՆ ՀԱՅ ԵՐԳԻՉՆԵՐ.

Առաքել Բաղիշեցի, Նաղաշ, Կարապետ վարդապետ Բաղիշեցի, Գրիգոր Ժերննց:

Չեռագիր Ս. Էջ. Մատենադարանի № 282.

Տ Ա. Ղ. Ա. Բ Ա. Ն 3.

(Շարունակումը):

Թ. Թ. Գ. Թ. 13.

Նախընթաց Բ. ծախքն ընկած լինելով այս երեսի վերայ սկզբում միայն մի վերջարան է մնացել կորած տաղի, որին յաջորդում է առանց գրչխակարգութեան յայտնի «Գոհար վարդն» 1 ոտանաւորը մի բոլորովին նոր ձևով և խառն օտարաբարբառ տողերով:

Ահա այդ երգի մնացորդը.

Գոհար վարդըն վառվառնաւ: Կրկէ,
Ղեկեց վարսիցն արիմնից: Կրկէ.

Թուրան նիզաթէ, թուրան նիզաթէ, թէ զաթէ՝ սըմընտիլ կուլիա պանիա՝ ուսայ (?), աւսայ աւսէ աւսէլ կոււնացիա, էլկոււնացի էլ կոււնացի է աւս:

Ի յաւուր բաժանման հոգւոյս ի մարմընոյս զինահար զքեզ ունիմ, որ մարդ ես և կոյս:

Թ. 13. — Գոհար վարդ ինքնագոյն

Սիրամարգ ոսկէգոյն,
Գոհար վարդ ինքնագոյն յարիւոյն
Սիրամարգ ոսկէգոյն,
Գուլուսին լի լուսով ի մէջ գիշերի
Գուլուհալ լուսափայլի յառաւօտի՝
Կոյս Մարիամ աղաչեալ պաղատեալ
խնդրեալ, հայցեալ, աղօթեալ
ես եմ քո ծառայ:

Ի յաւուր բաժանման

Գուլուհալ անթառամ՝

Լուսոյ մայր Մարիամ:

Գու ծաղիկ անժառամ

Աճմամբ վարդենի՝

Հոտանուշ բուրմամբ:

Այս առիթին յաջորդում է մի տուն տաղ Ս. Էջմիածնի մասին և ապա երեսի վերջին աղոթում սկսուում է նոր տաղ. «Սայլք իջանէին ի լեռնէն...»

Թ. 14.

Նախընթաց տաղին անմիջապէս յաջորդում է մի տաճկերէն երգ Ա. տնից բաղկացած, որի սկզբն է. «Բնէն զէնէ զէնէն ի Գ...» Տաղիս վերջն կցուած է. «Թըլկուրանցի յովհանիսի... (պարսաշ) Ղուկաս գրեցի, ով եղբայր թէ [պէտ անօր] էնէ ապա բանս լաւ երևեցաւ:

Թ. 15^ա—25^ա

Պանոն գլխեր. (?) «Գառեա Տէր զպնոսիկ... Սաղմոսներ և ալէլուք, ճաշու ժամի ասացուածք:

Թ. 25^ա

Որգան կարմիր պատրաստելու խրատ, մի երկրորդ և աւելի ուշ ժամանակի պատկանող ձեռքով գրուած:

Յառաջ կնք բերում այս փոքրիկ նշխարս, որ մի երես միայն տեղ է բռնում:

«Խրատ փասն որդեան նախ առ որդ, չօղան, լուրթր, շիպ, ամէնն սրղքէ, չօղանն մի սրղքեր, որիշ որիշ սղքէ զատի չօղանէն, ապա յորժամ ջուրն ածես ծանիր որ. Զ. գրամ որգանն ա. նուկի ջուր ած, յառաջն ջուրն գիր պուտիով ի վերայ կրակին որ եռայ (եփի). ապա մէկ գրամ որգանն, մէկ պրտղունց չօղան ձգէ գիր եռայ (եփի). ապա փայր ա՛ ջուրն քաշէ ու որգն ձգէ խառնէ, քանի գրամ որգն է այնչափ պրտղունց լուրբ ձգէ այնչափ պտղունց այլ շիպ ձգէ, Խառնէ, ապա թէ լաւ գաւլպանտով քամէ, ապիկի ամանով գիր որ չորանայ, յորժամ բանացնես սումղածու գրէ, յայտ է: Գարձեալ գիր վերայ կրակին որ եռ մի գա[ւ] բայց ի չորացնելն գոլպանա չորով ծածկէ որ չը թօզոտի:

Թ. 25^բ—26^ա

«Հայր մեր», վերագրի կանոն և գրչափորձ երկրորդ և երրորդ ձեռքերից:

Թ. 26^բ

Կէս երես սկզբնական ձեռքով «Անդաստան օրհնէս»:

Թ. 27—29^բ

Երեք տաղ սուրբ աստուածածնի պրոբնական տնակարգով: Առաջին տաղից միայն վերջն է մնացել (ր. ց. ւ. փ. ք.) երկրորդն ամբողջ է, իսկ երրորդն հասնում է մինչև Ի տունը:

Երկրորդ տաղի սկիզբն է. «Որն լուսոյս...»

Երրորդ տաղի սկիզբն է. «Աստուածածնի մայր լուսոյ...»

Թ. 30—33^բ

Երկու տաղ յարութեան, առաջինը 24 տնից, երկրորդը՝ 19, առաջնի սկիզբն է. «Գ...»

Երկրորդ տաղն սկսուում է. «Գ...»

Սրա տների սկզբնագրերը կազմում են «Յակոբ մկրտարն ասացի Ա.՝ Յաջորդ տաղումը թ. 34^բ այս երգիչը իրեն անուանում է «Անիմաստ և արգէտ երգող նետարենց սուտ անուն յակոբ» նետարենց անունը նախ գրուած է նետարենց և ապա րջնջած և վրան գրած է «. Հայերգի» նետարենցը սրանով ուղղագրուում է:

Թ. 33^ա—34^բ

Տաղ սուրբ խաչին. «Սքանչելի սուրբ նըշանդ պատուեալ և փառօք...» 10 տնից բաղկացած, իններորդի մէջ հեղինակ նետարենց Յակոբը խնդրում է յիշել իրեն և իւր եղբայր Ղազարին, իսկ 10 տունն յաւելուած է գրչի, որ խնդրում է և իրեն յիշել:

Թ. 35—38^ա

Տաղ ձեռնագրութեան յԱռաքել վարդապետէ ասացեալ, առաջինը 15 տուն, երկրորդը 12 տուն, Առաջնի տնագլխների տառերը կազմում են. «ՏԵՐ ԱՌԱՔ(Ք)ԵԱԼ ԱՍ(Ե)Է»: Երկրորդինը՝ «Ի ՏԵՐ ԱՌԱՔԵԼԱՅ»:

Սկիզբն ա. տաղի. «Տ...»

Թ. 38^ա—40

Երկու տաղ, առաջինը (7 տուն), կոչուում է «տաղ հոգւոյ գալըստեան», իսկ երկրորդը (21

1 Տես Հայերգ. Ժ երես Ժ. Յակոբ եպիսկոպոս (Նետարենց): Հ. Գ. Զարք. պատմ. հայեր. դպրութիւն: Բ. հտ. եր. 267. յիշում է Ժ-Զ. դարու երգիչների մէջ մի Յակոբ վարդապետ:

տուն)։ «տաղ Յովհաննու Աարապետին»։ Հեղինակն անյայտ է։

Սկիզբն ա. սուրբ. «Սուրբ Գրիգոր Բարսեղի Գրքի շնորհակցութեամբ»։

Սկիզբն Բ. տաղի. «Յովհաննէս մեծ մարգարէ, երկրորդագոյ յարգանդէ. դու զովեցար ի տեսանէ թէ նման նրմա ոչ որ է. . . Յովհաննէս Աարապետին համեմատում է բոլոր նահապետների հետ սկըսած Ագամից մինչև իւր հայր Զաքարիայի հետ ու ամեն տան վերջն աւելացնում բայց քեզ նրման ո՛չ նա չէ»։

Թ. 40—41^ր

Տաղ սուրբ Յակոբ Հայրապետին. յԱռաքել վարդապետէ ասացեալ. «Անձառ միածին հօրն երկնաւորին. ընտրեալ ի յերկրէ սուրբ յակոբ. քրորէ մարմնային. . . 16 տուն, գլխատառերը կազմում են. «ԱՌԱՔԵԼ ԱՆՐԴԱՊԵՏԻ Է»։

Թ. 41^ր—43^ր

Տաղ անոյշ սրբոյն Մինասայ. «Տէր բարերար հօր միածին, յիսուս, քրիստոս, որդի կուսին ազաչանօր սուրբ Մինասին. Երմոգիենայ և գրարոսին. . . 12 տուն»։

Թ. 43—44^ր

Տաղ ծննդեան սուրբ Աստուածածնին. «Աարկոյն ի յայրին. կայր զարձանայր, կամէր ծնանիլ կեանքս ազգի մարգկան»։ 20 տուն, բոլորն էլ սկըսում են Վ. տառով, բացի երրորդ անից, որ Զ տառով է սկսում և վերջին տունը, որ Ա. տառով է սկսում։ Ոչ միայն աների սկզբնատառերն են Վ. այլ նաև աների գրեթէ իւրաքանչիւր բառը, Ն. Զարամեան։



ԳՐԱԿԱՆԱԿԱՆ ԱԿՄԱՐԿՆԵՐ.

I.

ԱՌԱԿԱՆՈՍՈՒԹԻՒՆ ԵՒ ԻՎԱՆ ԱՆԳՐԷՆԻՅԷ ԿՈՒԼՈՎ * (Ն. Ա. Նահրովի մահուան 50-ամեակը առթիւ)։

Գ.

Մինչև Պետրոս Մեծը Ռուսաց գրաւոր գրականութիւնը հոգևորականների ձեռքումն էր և կրում էր զուտ կրօնական—բարոյական գրոշմ։ Հոգևոր երգեր, Աբ. Գրքերի մեկնութիւններ, քարոզներ՝ ահա այդ ժամանակուայ ռուսաց գրականու-

թեան նիւթը. գեղարուեստական գրուածքների մասին գեռ գաղափար չունէին։ Սակայն ժողովրդի մէջ պատում էին և այնպիսի գրուածքներ—մեծաւ մասամբ թարգմանական—որոնք կրում էին արդէն աշխարհական ընաւորութիւն։ Գրանք գլխաւորապէս վէպեր և վէպիկներ էին, որոնց թուում պէտք է յիշել Բիզպայի առակների թարգմանութեանց «Ստէֆանիտ և Իմնելյատ» կոչուած շատ տարածուած ժողովածուն։ Այդ ժողովածուն երևում է Ռուսաստանում Ժե.րգ գարում և մի երկու դարերի ընթացքում ժողովրդի սիրելի գրքերից մէկն էր։ Ժե.րգ գարում այդ ժողովածուի տեղն է բռնում Եզովպոսի առակների թարգմանութիւնը։

Ժե.րգ գարուց սկսած գրեթէ բոլոր ռուս երգիծարանները փորձեր են անում առակներ գրելու կամ թարգմանելու։ Այս փորձը առաջին անգամ կանաէմիրը արաւ, որ 1731 թ. փոխագրեց Եզովպոսի մի քանի առակները։ Բայց նա ինքը զուրկ էր բանաստեղծական տաղանդից և գրում էր գեռ վանկական (սիդդարիկական) տաղաչափութիւնով, բոլորովին հակառակ ռուս լեզուի կազմութեան ու ոգուն։ Այս տաղաչափութեան ռուսաց լեզուին անհամապատասխան լինելը առաջինը նկատեց և ապացուցեց Տաէգիակովսկին։ Սակամենալով նմուշներ տալ նոր ձայնական տաղաչափութեան՝ գրեց և թարգմանեց բազմաթիւ ոտանաւորներ։ Սակայն սա էլ զուրկ էր բանաստեղծական շնորհից, ուստի և նրա բոլոր ոտանաւորները, ի թիւս որոնց և նրա վեցաչափով թարգմանած Եզովպոսի առակները ծիծաղի ու սրախօսութեան առարկայ դարձան։ Ռուս առաջին գրամատուրգ Սուամառովը (1718—1777) մեծ հոգակ էր բուտացել ինքնուրոյն և թարգմանական առակներով։ Նախորդների հետ համեմատելով սրա առակները աւելի լաւ են. բայց այժմեան ընթերցողների տեսակէտից թէ՛ բովանդակութեան և թէ՛ ձևի կողմից նրանք շատ կոպիտ են և շատ անգամ առակների

* Սկզբը տնս 1895 թ. Յունուարի համարում, էջ 17: